նում են սրբատաշ քարով տաճարի և նորա գավթի հյուսիսային կողմը՝ զուգահեռ սրանց։ Ականատես Մխիթար Այրիվանեցին, յեթե յերկու յեկեղեցի յե հիշում Պառշի շինած միապաղաղ և միաձոյլ քարից, վիմափոր տաճարն ու նորա գավիթը մի յե համարում։ Շենքերի դիրքն ու հատակագիծը կարելի յե տեսնել Սիսովի աշխատության մեջ, Ուվարովայի և Խ. Հովհաննեսյանի խմբագրությամբ* և Ստ. վ. Մխիթարյանի գրքի մեջ (յեր. 25) առնված Dubois-ից։

Վիմափոր տաճարի և յուր գավթի մուտքը, անջատ սյուներով գավթի հյուսիսային պատից է, կից, գրեթե, կրկնահարկ ավանդատներին։ Ներս ենք մտնում նախ քարակոփ գավիթը, վորի հարավային պատի մի փոքրիկ մասը, դրան մոտ միայն սրբատաշ քարից և շինված. մնացածն ամբողջապես փորված է ժայռի մեջ։ Դրսից այդ շենքերը նկատելի չեն, ինչպես պարզ գաղափար է տալիս բոլոր շենքերի արտաքին տեսարանը, վոր նկարված է արևմտյան կողմից (պատկ. 32)։ Բարձր գմբեթով շենքը նախապառոշյան սրբատաշ քարով շինած տաճարն է. նրանից այս կողմը, դեպի նայողը, արևմտյան կողմից, սրբատաշ, տափակ և քառանկյունի կտրով, կեդրոնում փոքրիկ բարձրությամբ և բոլորակ բացվածքով, սյունազարդ նախապառոշյան գավիթն է յուր յերդիկով, իսկ սրբանցից դեպի ձախ ժայռերին կցված հարթ տարածությունը յերկու բոլորակ բացվածքներով, Պառշի և նորա վորդու՝ Պապաքի վիմափորներն են, կտուրները սալահատակած։

Պողոս եւ Պետրոս առաքեալները. **Պատկեր 35.**

Վիմափոր գավիթը ներսից՝ բաժանված է յերկու մասի. հյուսիսային կողմից մուտքի դեմ ու դեմ հատակը բարձրանում է տախտաձև, պատի ուղղությամբ, և յերկու կամարներով, վորոնց միջին ծայրերը հանգչում են ութ կողանի մի սյան վերա, մի սրահ կազմում, ուր ամփոփված եյին տոհմի ննջեցյալները. այժմ գերեզմանները խառնված։ Այս սրահի արևելյան պատին մի խորափիտ, կամարով, պատրհան և փորված, վոր դարձյալ գերեզման է։ Ահա այս մասերն են, վոր Պառշ պատրաստել էր «տուն տապանի», «կամարակապ», «առ ի հանգիստ իշխանացն»՝ Այրիվանեցու խոսքերի համաձայն։ Բուն գավթի մեջ ևս կան գերեզմաններ, վորոնցից մեկն է յեղել Պառշյանների վերջին շառավիղներից Դանիել վարդապետի գերեզմանը, վորի քարն այժմ ձգված է սրբատաշ տաճարի հարավային պատի մոտ՝ դրան առաջ։

Սրահի յերկու կամարները միացնող սյան գլխին յերևում է մի յեզան գլուխ, բերանից ողակ կախված, իսկ այդ ողակից շղթայված են յերկու, իրար դեմ հանդիստ կանգնած առյուծներ, պոչերի ծայրերը վիշապագլուխ։ Առյուծների գլուխների մոտ, նրանց կապող շղթայի տակ, մեջ տեղում, քանդակված է մի թևատարած արծիվ, մագիլների մեջ խոյ բռնած։ Առյուծները և ամբողջ բարձրաքանդակը կոպիտ է, բայց տպավորիչ (տ. պատկ. 26։ Սրահի տեսարանը առյուծների հետ տ. Мат. по Археол. Кавк. XIII. Табл. VII. 14)։ Գավիթը արևելյան պատի մեջ խորը կամարի տակ վեմքար ունի, այդտեղ և մի գերեզման. կամարի անկյուններում, դրսից դեմ առ դեմ կանգնած են յերկու թաղաղարդ պարիկներ (պատկ. 33), իսկ դեպի վիմափոր տաճարը տանող դրան և այս խորանի միջին տարածության վերա քանդակված է մի գեղանկար խաչքար (պատկ. 34), վորի գլխի հյուսկեն վարդյակը կրկնված է և հորիզոնական թևերի ուղղությամբ, յերկու կողմից, մեր լուսանկարի մեջ վերջին վարդյակները

* Мат. по Археол. Кавказа XIII. ст. 3.